ԱՐԿԱԴԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ

# ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Այսօր ազգային դաստիարակության մասին խոսելիս հատուկ ուշադրություն է դարձվում դաստիարակության էության ճիշտ ըմբռնմանը: Ազգային ու համամարդկային արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում: Մարդը ծնված օրից ընդօրինակում է ազգային ապրելակերպը, յուրացնում լեզուն, ավանդույթները, մշակույթը, հոգեբանությունը եւ բազմաթիվ այլ որակներ, որոնք աստիճանաբար ձեւավորվելով, անձին դարձնում են տվյալ ազգի լիարժեք անդամ: Այդ գործընթացն ազգային դաստիարակությունն է, որը տեղի է ունենում հիմնականում դաստիարակության նպատակներ չհետապնդող, բայց միշտ էլ այս կամ այն գործունեությամբ: Իսկ գործունեությունը միշտ էլ դաստիարակում է իր սուբյեկտին պայմանավորված գործունեության բովանդակությամբ: Սա է դաստիարակության կամ որ միեւնույնն է, մարդու ձեւավորման ու սոցիալականացման հիմնական օրենքը[1]:

Ազգային դաստիարակությունը եւս ենթարկվում է այդ օրենքին, սակայն կարող է գործել եւ ի վնաս ազգի կամ ազգայինի ու համամարդկայինի:

Ընդհանրապես, իրական կամ ճիշտ ըմբռնված ազգայինը իրական եւ ճիշտ ըմբռնված համամարդկայինի մասն է: Դաստիարակության միջոցով զարգացնելով անհատին զարգացնում ենք եւ մարդկությունը, որի անդամներն են անհատ անձնավորություններն ու ազգերը: Անհատի զարգացումը կախում ունի ազգերի, իսկ վերջիններիս զարգացումն էլ մարդկության զարգացման աստիճանից: Հայեցի դաստիարակությունը ձեւավորում է հայ մարդուն, սակայն համամարդկային արժեքներ չյուրացրած հայը չի կարող իր ազգի լիարժեք անդամը լինել: Ահա թե ինչու հայ դպրոցի, առհասարակ, հայեցի դաստիարակության կարեւորագույն խնդիրն է ապահովել ազգայինի եւ համամարդկայինի միաձուլումը:

[1] Մանուկյան Ս., Ստավոր գործունեության ձեւերը կրթության բովանդակության կազմում. Երեւան, «Զանգակ-97» հրատ., 2000, 79 էջ:

Այս առումով կարեւոր է համակարգված դաստիարակությունը տարբերել ոչ համակարգվածից: Բանն այն է, որ դրանցից յուրաքանչյուրը յուրովի մոտեցում է պահանջում: Համակարգված կարելի է համարել ընտանիքում, որոշակի հաստատություններում իրականացվող դաստիարակությունը: Ոչ համակարգված դաստիարակությունը դրանցից դուրս է եւ ընդգրկում է տարածքային ու ժամանակային առավել մեծ տարողություններ: Ոչ համակարգված դաստիարակությունը, որը Լ. Շանթն «անվար» է անվանում, որոշակի պահանջներ է առաջադրում պետական ամենատարբեր կառույցներին, քանի որ խոսքն այս դեպքում ժողովրդական զանգվածների ամենօրյա գործունեությանն է վերաբերում:

Հայերիս համար մտահոգիչ է այն հարցը, թե ինչպես մտնել համամարդկային գործընթացի մեջ չկորցնելով մեր մշակույթի հոգեւոր արժեքները:

Վերջին ժամանակներս իրեն զգացնել էր տալիս մի ծայրահեղ դիրքորոշում, համաձայն որի, դպրոցի ազգայնացումը ներկայացվում էր սոսկ որպես մայրենի լեզվով իրականացվող ուսուցում, իսկ օտար լեզուն որեւէ առնչություն չպետք է ունենար մայրենիի դասավանդման հետ: Սակայն սթափվելը ժամանակին եղավ, եւ ձեւավորվեց այն համոզմունքը, ըստ որի, ազգային դպրոցը միայն մայրենի լեզվով ուսուցում չէ: Չկան ազգային քիմիա, ֆիզիկա եւ այլ գիտություններ: Ազգային դպրոցը մի այնպիսի կառույց է, որը ձեւավորում է խելացի, բանիմաց, նախաձեռնող եւ ստեղծագործող շրջանավարտներ, իր ժողովրդի հոգեւոր արժեքները յուրացրած եւ դրանք կատարելագործելու ընդունակ սերունդ: Այդ դպրոցում ուսումնական բոլոր առարկաները հնարավորության սահմաններում հագեցվում են ազգային ոգով, եւ հայ երեխան ամեն մի առարկայի մեջ տեսնում է համամարդկայինի ավանդը:

Այս հարցը քննարկելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաեւ հետեւյալ հանգամանքին: Միշտ էլ շրջանառության մեջ է գտնվել այն գաղափարը, համաձայն որի, լավ հիմքերի վրա դրված կրթությունը, որը նպաստում է ժողովրդի մակարդակի բարձրացմանը, համապատասխանում է ժամանակի պահանջներին, արդեն ազգային է: Լիարժեք կրթության շնորհիվ է հնարավոր հասնել այն բանին, որ ազգն ունենա ընդհանուր կամք՝ տիրանալու իր նախնիների կերտած հայրենիքին, տեր կանգնելու իր անցյալի հաջողություններին ու անհաջողություններին, հաղթանակներին ու պարտություններին, իր երջանիկ ու դժբախտ օրերին՝ ձգտելով ունենալ ընդհանուր կամք ապագայի նկատմամբ՝ կերտելու նոր ապագա[2]:

---

[2] Մինասյան Բ., Մանկավարժական հիմունքներ, Թավրիզ, 1991, 420 էջ:

Քաղաքակիրթ ազգերի մտահոգության առարկան ազգային դաստիարակությունն է, ուստի հայերը եւս պետք է մտահոգվեն այս կարեւոր խնդրով: Սակայն ազգային դաստիարակությունը չպետք է մոռանա, որ «դաստիարակությունը պիտի պատրաստի լրիվ եւ կատարյալ մարդ»[3]: Ընդհանրապես, անցյալի հայ մանկավարժագետները մշտապես ընդգծել են, որ չի կարելի ազգի դաստիարակությունը սահմանափակել միայն ազգային բովանդակություն ունեցող կրթությամբ:

1908թ. քննարկելով ազգային դպրոցի մասին գերիշխող մի դիրքորոշում, համաձայն որի, դպրոցի ազգայնացումը ներկայացվում է սոսկ որպես մայրենի լեզվով ուսուցման կազմակերպում, իսկ օտար լեզուն պետք է դասավանդվի մայրենի լեզվից դուրս շրջանակներում եւ չընդունելով այդ դիրքորոշումը, Ս. Մանդինյանը գրում է. «Որքան կամենաք, մայրենի լեզու տվեք, բայց եթե մյուս ուսմունքները, օտար լեզուն անփույթ ավանդեք, ծեր դպրոցը երբեք չի ազգայնանա: Ամբողջ դպրոցն առողջ կազմվածք պիտի ունենա, իսկ օտար լեզուն ամբողջության մի անբաժանելի գործոն է: Ավանդված լեզուն հազար թելերով ազդեցություններ է ուղարկում մայրենի լեզվին եւ փոխադարձաբար այնտեղից ազդեցություններ ստանում»[4]:

Կարծես այդ միտքն է հաստատում Ս.Ի. Հեսենը գրելով. «Ինչպես կործանարար է նացիոնալիզմը ազգային կրթության համար, այդպես էլ կործանարար է կոսմոպոլիտիզմը: Համաշխարհային արժեքների վրա կառուցված դաստիարակությունը որեւէ ընդհանրություն չունի կոսմոպոլիտիզմի (աշխարհաքաղաքացիություն) հետ, որը ժխտում է ազգի յուրահատկությունները: Ազգը եւ մարդկությունը կոսմոպոլիտիզմի կողմից մեկնաբանվում են որպես մասերի (առանձին անհատների) հասարակ գումար»: Նա ուղղակի գրում է. «Իր մշակույթում կյանքին պատրաստող ազգային կրթությունը հնարավոր է միայն ապահովելով միացումը համամարդկային արժեքների յուրացման հետ: Հատկապես համաշխարհային մշակույթի այլ ժողովուրդների հետ ունեցած հարաբերակցությունն է ազգին ազգ դարձնում եւ ոչ թե ինքն իրենով պարփակվելը»[5]: Այս իմաստով խիստ ուշագրավ են Պ. Սեւակի նկատառումները: Նա, ազգային արժանապատվությունը համարելով ազգի ամենակարեւոր հատկանիշներից մեկը, այն ներկայացնում է որպես ազգի քաղաքակրթության մասին շատ բան ասող չափորոշիչ, որը չի սահմանափակվում ազգային շրջանակներում եւ իր բովանդակությամբ համամարդկային է: Ես բաց

---

[3] Նույն տեղը:
[4] Մանդինյան Ս., Համառոտ մանկավարժություն, Թիֆլիս, 1878, 211 էջ:
[5] Նույն տեղը:

ճակատով եւ լեցուն հպարտությամբ պիտի վկայեմ, որ ես հայ եմ՝ զավակը մի ժողովրդի, որ իրոք, շատ բան է տվել աշխարհի քաղաքակրթությանը եւ տվածի մեջ էլ ինձ համար ամենաթանկն ու ամենագեղեցիկն իր այլասիրական այն ոգին է, որ եվրոպացիք ալտրուիզմ են կոչում, իսկ մեր երկրում գերադասելի է կոչել «ինտերնացիոնալիզմ»[6]: Կարելի է վստահորեն հավաստել, որ ընդհանրապես ազգային դաստիարակության հարցերով զբաղվող հայ մանկավարժները միշտ էլ ընդգծել են այն հանգամանքը, որ ցանկացած ազգի դաստիարակության կարեւորագույն խնդիրներից է կրթության ապահովումը: Մարդկային ազգի համար չկա խնդիր, որ այնքան կարեւորություն ունենա, որքան կրթության խնդիրը: Վերջին շրջանի կրթական հիմնադրույթների առաջնահերթ խնդիրներից է 21-րդ դարի սովորողների հայեցի դաստիարակության ապահովումը, ուստի դպրոցականի համար նպատակահարմար է, որ նրա ակտիվ կենսադիրքորոշման ձեւավորումը դիտվի գործունեություն եւ բխի նրա հետաքրքրություններից, պահանջմունքներից, դրդապատճառներից, հակումներից: Դաստիարակությունը տարվի դպրոցականի կողմից ընդունելի, արդյունավետ մոտեցումներով, որոնք բխեցվեն դպրոցին առաջադրվող նոր պահանջներից, դպրոցական կյանքի արդյունավետ կազմակերպման խնդիրներից՝ նպատակ ունենալով դպրոցականի ակտիվ կենսադիրքորոշումն աստիճանաբար դարձնել միջոց անձնավորության որոշակի որակներ ձեւավորելու համար, որոնց շնորհիվ նա ինքնուրույն եւ նախաձեռնող կլինի կյանքի ամենաբազմազան բնագավառներում՝ որպես անհատականություն:

Հայեցի դաստիարակության հիմնախնդիրը քննարկման առարկա դարձնելիս հույժ կարեւոր է հետեւել հարցի քննարկմանը. կարելի՞ է, արդյոք, բացահայտել նաեւ ազգի թերությունները: Պատահական չէ նման հարցադրումը, քանի որ իրականության մեջ ազգատյաց են համարել եւ, ըստ երեւույթին, համարում ազգի թերությունները քննադատողներին: Սա Հ. Հինդլյանի խոստովանությունն է: Սակայն նա նման մարդկանց համարում է անտարբեր ազգի շահերի նկատմամբ. «Ազգասերն ան է, որ գիտե տեսնել ազգի թերությունները (նախանձ, անկարգապահություն, պատասխանատվության զգացման պակաս, անհամերաշխություն եւ այլն) եւ իրովսանն կճգնի զանոնք ուղղելու: Ազգասերն ան է, որ կուսակցությանը պատկանելով հանդերձ անջատողական գաղափարներ չի սնուցաներ բնավ իր մեջ: Ազգասերն ան է, որ չի սնուցեր իր մեջ ոխ դրացի ժողովրդին հանդեպ»[7]:

---

[6] Ադամյան Ա., Զրույց Պ. Սեւակի հետ, «Մայրենի», 1993, թիվ 1-2:
[7] Հինդլյան Հ., Սնկեղծ էջեր, 1, 2, 3, 4 հատորներ, Կ. Պոլիս, 1913-1922թթ., 475 էջ:

Ցանկալի է թե ոչ՝ գրել նաեւ ազգի թերությունների մասին արդեն հնացած հարց է, քանի որ վաղուց է գրվել այդ եւ իրականացվել հայ մտավորականների կողմից: Պատմությունը ցույց է տալիս, որ ազգային դաստիարակության խնդիրներով մտահոգված հայ մտավորականները հատուկ ուշադրություն են դարձրել ազգի նաեւ բացասական գծերին, նրա թերություններին: Սա, իհարկե, միայն հայ մտավորականի հոգսը չէ, կարեւորն այն է, որ հայերը դեռեւս շատ վաղուց են ուշագրավ դարձրել այդ հանգամանքը՝ ձգտելով ազգին ազատել այդ անցանկալիից: Հիշենք, թե ինչպես է մեր պատմահայրը՝ Մովսես Խորենացին, ցավով գրում հայերի թերությունների մասին. «Կամենում եմ նաեւ առանց մեղադրական հիշատակության չքողնել մեր հին նախնիքների անիմաստասեր բարքը, այլ հենց այստեղ մեր ծեռնարկության սկզբում, նրանց մասին կշտամբանքի խոսքեր գրել:

...Մեզ ամենիս հայտնի է մեր թագավորների եւ մյուս նախնիքների տխմարությունը դեպի գիտությունը եւ բանական հոգու անկատարությունը:

Բայց գուցե մեկն ասի. այն ժամանակ գիր ու գրականություն չլինելու պատճառով (եղավ այդ) կամ զանազան պատերազմների շնորհիվ, որ անընդհատ մեկը մյուսին հաջորդում էին: Բայց իրավացի չի լինի այսպես կարծելը, որովհետեւ պատերազմներն ընդմիջումներ էլ են ունեցել, եւ կային պարսից եւ հունաց գրեր, որոնցով գրված այժմ գտնվում են մեզ մոտ անթիվ քանակությամբ գրություններ»[8]:

«Հայ ուսուցչին պարտականություն է ուրեմն հայ մանուկին պատրաստել վաղուան հայ մարդը, որը ըլլայ նախ առողջ կենսունակ մը ու ըլլայ յետո խոհուն, զգայուն եւ կորովի մարդ մը»[9]:

Հոգեբան Հ. Պողոսյանը ցավով է գրում այն մասին, որ հայերին բնորոշ է տեղացիական հայրենասիրությունը. «Մեր հայրենակիցներին անհասանելի է այն,- գրում է նա,- թե կա հայկական ընդհանուր հայրենասիրություն, ավելի կարեւոր, քան տեղացիականը եւ գյուղացիականը: Մեր հայրենասիրությունը խիստ սահմանափակ է եւ կղզիացած: Դա դրսեւորվեց նաեւ կուսակցական հայրենասիրությամբ, այսինքն՝ իր կուսակցական ըմբռնումով ու գործելու եղանակի մեջ միայն հայրենասիրություն տեսնելու ու գտնելու մոլուցքով:

Կրոնականների մեջ եւս դրսեւորվեց հրաժարումն ընդհանուր հայրենասիրությունից: Կաթոլիկը ջանում է հային պապականացնել, բողոքականը մոռացավ հայությունը եւ աշխատում է հոգիներ փրկել»[10]:

---

[8] Խորենացի Մ., Պատմություն հայոց, Երեւան, 1961, էջ 82-83:
[9] Կիրակոսյան Գ., Ուղեցույց հայ ուսուցչին, Փարիզ, 1939, էջ 9:
[10] Պողոսյան Հ., Հայ հոգեբանության ներածություն, Կահիրե, 1956, 520 էջ:

Իհարկե, ախորժելի չէ տեսնել ազգի տգեղ ու բացասական կողմերը, որին պատկանում ես դու, սակայն ազգի եւ նրա յուրաքանչյուր զավակի պարտականությունն է տեսնել դրանք եւ ոչ թե խուսափել, չնկատող լինել:

«Բացասական երեւույթները մեր ցեղի նախնական բնավորությունների մնացորդներն են, որոնք դարերի վայրագ ու դժնի պայմաններում ցեղի համար օրհնաբեր, փրկարար միջոցներ են եղել, իսկ հիմա կորցրել են իրենց ուժը, դարձել են անհաշտ ժամանակի համար»[11]:

Հատկանշական է մեր ժողովրդի հոգեբանության վերասրբագրության պահանջը. ա) արհամարհել անցած դժվարությունները տեխնիկական գերազանցությամբ, բ) մեր գոյության եւ բնաշխարհի առարկայական պայմաններին համապատասխանող դաստիարակությամբ, գ) վերադաստիարակությամբ սրբագրել մեր ժողովրդի հոգեբանությունը դարձնելով նրան իր ամբողջության մեջ ազգորեն ինքնագիտակից, կորովի, մարտունակ:

«Չկա հայ սերունդների մեջ անհատ մարդուց բացի եւ դրանից առավել ցեղային մարդ դաստիարակելը: «Հայն իբր անհատ խելացի է եւ կարող, սակայն, իբրեւ ցեղային անհատ, շատ բան չարժե: Թե անցյալում եւ թե ներկայում մեր տկարությունը եւ վերքը հոս է: Ապագայի ազգային իշխանություններուն կմնա որդեգրել այնպիսի կրթական դրություն մը, որուն ներքո դաստիարակվողը նոր հայությունը դարբնի իբրեւ ցեղային մարդ եւ միայն այն ժամանակ հայությունը հզոր ազգ, կազմակերպված ազգ, դիվանագետ ու վարչագետ ազգ, հարձակվող ազգ կդառնա»[12]:

Ուսուցման բոլոր առարկաները պետք է գունավորել ազգային, հայ ազգային գույնով, հայ երեխան պիտի զգա, որ սովորում է հայ կրոնը, հայ գիտությունը, հայ պատմությունը»[13]:

«Հայ ազգային դաստիարակության իդեալը նույնն է, ինչ որ հայ ազգային հավաքական ընդհանուր գաղափարաբանությունը. հայ ժողովուրդը լինի 1. բնախոսահոգեբանորեն առողջ, 2. բազմացման կարողությունը զարգացնող, 3. տնտեսապես ապահով, 4. սեփական հայրենիք ունեցող,

5. քաղաքական անկախություն, ազգային գերիշխանություն ունեցող, հոգեբանական եւ բարոյական իր ընդունակությունները ազատորեն զարգացնող եւ կատարելագործող»[14]:

---

[11] Նույն տեղը:
[12] Միհասյան Բ., Մանկավարժական հիմունքներ, Թավրիզ, 1991, 420 էջ:
[13] Նույն տեղը:
[14] Նույն տեղը:

Հայեցի դաստիարակության հարցերին բազմաթիվ էջեր նվիրած Բ. Մինասյանի «Մանկավարժության հիմունքներ» աշխատության մեջ ներկայացված պատկերացումները լուրջ քննարկման առարկա են դարձել Հրայր Կարապետյանի կողմից: Նա ցույց է տալիս, որ այդ աշխատության մեջ նորովի մոտեցում է ցուցաբերվում հայեցի դաստիարակության խնդրի նկատմամբ, եւ յուրովի ու ինքնատիպ հայեցակարգ է ստեղծվում: Ըստ Հ. Կարապետյանի, հայ մանկավարժության մեջ ազգային դաստիարակության հայացքների համակարգում Բ. Մինասյանի կողմից արդեն օգտագործվում է «հայեցի» հասկացությունը, որին հանդիպում ենք նաեւ Եղիա Քասունու «Պատմություն հայ հին դաստիարակության» գրքում, որը լույս է տեսել Բեյրութում, 1959թ.: Բ. Մինասյանն իր հայեցակարգում շրջանառության մեջ է դրել նաեւ «ազգային էակ», «ազգային ենթագիտակցություն», «ազգային իդեալ», «այլասեր էակ», «ազգային դաստիարակության իդեալ» հասկացությունները՝ բացահայտելով դրանց ծավալն ու բովանդակությունը, որոնք այսօր էլ ոչ միայն չեն կորցրել իրենց թարմությունը, այլեւ ընդհակառակը՝ մեծապես կարեւորում են հայ ազգային դաստիարակության ամբողջական եւ այսօրվա ու մեր հեռանկարային պահանջներին բավարարող հայեցակարգ ստեղծելու իմաստով: Կարեւորում է նաեւ նրա «Դաստիարակությունը ազգի մեջ, ազգի միջոցով եւ ազգի համար» սկզբունքը, որով առավել է ամբողջանում նրա մշակած հայեցակարգը: Դրական գնահատականի է արժանանում այն, որ Հ. Կարապետյանը միանգամայն արդիական է համարում Բ. Մինասյանի պատկերացումը ազգային դաստիարակության մասին՝ գրելով. «Քանի որ դաստիարակության ազգային իդեալը ազգի գոյության պահպանումն է, զարգացումն ու երջանկությունը, ուստի եւ, ազգային դաստիարակությունը կոչված է հաշտեցնելու ազգի գոյության պայքարը, կյանքի պայմաններին նրա հարմարեցման գործընթացը: Ահա թե ինչու ազգային դաստիարակությունը պետք է երեխայի մեջ ստեղծի այն գիտակցությունը, որ նրա անհատական երջանկությունը գտնվում է ազգի հավաքական երջանկության մեջ, որ նրա անհատական բոլոր ձախորդությունները, բոլոր դժբախտությունները բխում են ազգային ընդհանուր ձախորդություններից ու դժբախտություններից: Ուստի եւ, դաստիարակության դերն է երջանկացնել անհատին ազգային երջանկության միջոցով»[15]:

---

[15] Կարապետյան Հր., Ազգի եւ ազգայինի դաստիարակության հիմնախնդիրները, Երեւան, «Հասոն» հրատ., 1999, 57 էջ: